

Խմբ. — Հայկական մեծագոյն ապստամբութիւնը . . . . .	42
Խմբ. (հր.) — Յովհ. Եփեսացի (եպոս.)	49
Եկեղեցական պատմութիւն . . . . .	52
Քիչրտեան Յ. — Խճանկարը (mosaïque)	52
Հայոց մտ . . . . .	60
Սոֆիան Վ. — Անցորդը (քերթուած)	64
Մկրտիչ քճյ. Մուրադեան. — Սասնոյ սրբավայրերն ու աւանդութիւնները . . . . .	65
Գ. Արք. Արարկեան. — Պատարկիներ լուսածիր շաբաթացեալ վանքերէն . . . . .	68
Երևեան Հ. Ս. — Խեղաթիւրումներ . . . . .	72
Սարգսեան Հ. Գր. — Պատասխան «Սիւն»ին . . . . .	75
Ֆերանեան Հ. Ս. — Բուսաբանական դիտողութիւններ . . . . .	77
Երևեան Արամ. — Ռուսահայ թատրոնի պատմութիւնը . . . . .	81
Յովհաննէսեան Հ. Վ. — Կարպետ Աղամբանի անձնական ցուցահանդէսը . . . . .	97
— Գէորգ Սինանեանի երաժշտական նոր հեղինակութիւնները . . . . .	101
Խմբ. — Հրանդ Վեհակրոն (Հ. Ալատին)	103
Երևեան Հ. Ս. — «Վերադարձի՛ր Աշխատանոց» (Վեհակրոն Հրանդի)	104
Խմբ. — Թէրզեան ընտանեաց պատմական ալբոմը . . . . .	109
Երևեան Հ. Ս. — «Contes, Légendes et Epopées Populaires d'Arménie» (par Macler Frédéric) — «Սարկատազին տարեցոյցը» 1934 (Յ. Մանավեանի) — «Կեանք և Արուեստ (Խմբ. Մկր. և Մեր. Պարսամեան Եղբարց)	111
Քիչրտեան Յ. — «Պատմութիւն Հայ մատենագրութեան» (Եղիշէ Պատր. Գուրեանի) — «The travels of Marco Polo» (by Prof. Aldo Ricci) — «Ibn Battuta Travels in Asia and Africa 1325-1354» (H. A. R. Gibb) . . . . .	113
Փ. Հ. Ե. — Հայկական մամուլ (Գրական շարժում - Հանդէս հանդիսից) . . . . .	117
Խմբ. — Պելճիսոյ սուրբ և հայերու մատնակցութիւնը . . . . .	124
Վանատուր և Խմբ. — Ս. Վարդանանց տօնը և թատերական ներկայացումներ. Ի Սամ. Մուրատեան վարժարան - Սեր . . . . .	125
Ի Մ. — Ռափ. վարժ. Վենետիկ . . . . .	126

Réd. — Le grand soulèvement arménien (au V <sup>e</sup> siècle) . . . . .	49
Réd. — «Histoire ecclésiastique» de Jean d'Ephèse (fragments traduits) . . . . .	52
Kurdian H. — Le Mosaïque chez les Arméniens . . . . .	60
Sofian V. — Le Passant (poésie) . . . . .	64
Mouradian Prêtre M. — Sanctuaires et traditions de Sassoun . . . . .	65
Mgr. K. Arslanian. — Mémoires des couvents arméniens . . . . .	68
Erémian P. S. — Egarements . . . . .	72
Sarkissian P. G. — A la Rédaction de «Sion» . . . . .	75
Férahian P. E. — Considérations philologiques pour les mots des plantes . . . . .	77
Erémian Aram. — Histoire du théâtre des Arméniens en Russie . . . . .	81
Horhannessian P. V. — L'Exposition personnelle de Ch. Atamian . . . . .	97
— Nouvelles publications musicales de G. Sinan . . . . .	101
Réd. — Hrand Véhagron (H. Aladine)	103
Erémian P. S. — «Retournez au Laboratoire» (par H. Véhagron) . . . . .	104
Réd. — L'Album historique de la Famille Tersian . . . . .	103
Erémian P. S. — «Contes, Légendes et Epopées Populaires d'Arménie» (par Macler Frédéric) — «Almanach de Sargavak» (par H. Manavian) — «Vie et Art» (par M. et M. Barsamian Frères) . . . . .	111
Kurdian H. — «Histoire de la littérature arménienne» (par le Patriarche E. Tourian) — «The travels of Marco Polo» (by Prof. Aldo Ricci) — «Ibn Battuta Travels in Asia and Africa 1325-1354» (H. A. R. Gibb) . . . . .	113
P. E. P. — Presse arménienne: Mouvement littéraire - Revue des Revues. 117	
Réd. — Le deuil de la Belgique et la participation des Arméniens . . . . .	124
Vanadour et Réd. — La fête da S. Vartan et représentations théâtrales - à Sèvres (Paris) . . . . .	125
à Venise . . . . .	126

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԲԱՏԱՌԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1934

ՀԱՏ. Գ.Բ. ՌՅԳ.ՌՅԳ.Պ

Վ.ԵՆԵՏԻԿ Ս. Գ.Ա.ԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Մեր ազգին պատմական յիշատակարաններուն մէջ դժուար է գտնել յեղափոխութիւն մը այնքան մեծ՝ իր շարժման մէջ, այնքան խոր՝ գործած տպաւորութեամբ, այնքան վսեմ իր ներշնչումով, այնքան բոցավառ իր տեսականութեամբ, որքան վարդանանց մարտը Արքայից արքայի բանակներուն դէմ։

Եւ ամէն տարի, ազգային տօնախմբութեանց մէջ ան կը մնայ իր նուիրական բարձրութեան վրայ, կը յորդի իր սրտայոյզ ներշնչումը, կը նորոգուի ուխտը իր դատին՝ ամէն հայ սրտի մէջ, ամէն սուրբ սեղանի վրայ, աստուածային ամէն գոհարեութեան մէջ. ու ինչպէս երբեք ամբողջ հայ ազգը, ամբողջ հայ աշխարհն էր որ ոտքի ելաւ «Յաշխարհական ի հակառամարտին և ի մեծ պատերազմին», այսօր կրէ և կրէ և այսօր ալ ամէն հայ սիրտ կը բարախէ վարդանի և Ղեւոնդի, և ամբողջ հայ Նահատակներուն հետ՝ Հայաստանի համար, անոր ցեղային ու կրօնական պաշտամունքին սիրով։

Արդարեւ ինչ էր այդ հսկայական անլուր յեղափոխութիւնը՝ որ զարմանք և ապշութիւն ազդեց Պարսից հզօր բանակներուն, ինչ էր ան իր տեսլականին մէջ, իր խորքով ու գերագոյն դիտումներով՝ որ այդպիսի հուր մը վառեց, ամբողջ աշխարհն հրդեհեց և այնպիսի մեծ զոհարեութեան առաջնորդեց, եթէ ոչ ըմբոստացում մը խաւարի ուժին դէմ, որ կրօնքի և ազատութեան անկապտելի զանձերը կ'ուզէր կողոպտել մեր հայրենիքէն։

Ինչ որ դարերու պայքարով շահած էինք՝ Լուսաւորչի և Տրդատի նուիրագործած քրիստոնէական կրօնքը, Սահակ - Մեսրոպի և Վռամշապուհի ստեղծագործած Ոսկեղէն դարը, այդ ամէնը կրնար չբանալ մէկ հարուածով, և ամօթի ու կորանքի մէջ հայութիւնն իր մահավճիռը պիտի կնքէր... առ յաւէտ։

Քայց ո՛չ: Հայ ցեղի արիւնն եռաց իր երակներուն մէջ, Լուսաւորչի Աստուածը անգամ մ'ալ երեցաւ Այրաբաթի սպիտակափառ կատարին՝ ծիածանի գոյններուն մէջ, և Նոյեան ուխտի պատճէնը շողաց հոն՝ Սինայի տախտակներուն հանգոյն:

Հայկեան ու Բէլեան մարտին զրոյցը կ'իրագործուէր իր գաղափարական գծերով. եւ կ'ունենայինք ազգային մեծ դիւցազներգուն՝ յանձին Եղիշէի, եւ պատմագիրը՝ Ղազարի զրչով:

Եւ սուրբեր մերկացնելէ առաջ՝ Հայ աւագանին մեր հայրապետներուն հետ երդում ըրաւ մեր Հայրերու պաշտած Խաչին ու Աւետարանին վրայ. «Ազատ կրօնք՝ ազատ հայրենիքի մէջ, ի գին կեանքի և մահուան»:

Երբ զլացուեցաւ առաջինը՝ երկրորդն ընտրեցին, աներկմիտ ու անվեհեր: Եկեղեցի ու հայրենիք՝ ձեռք ձեռքի, սիրտ սրտի մղեցին այդ «մեծ պատերազմը». և նահատակուեցաւ ամբողջ Հայ աշխարհը:

Վերապրող ամբողջ հայ աշխարհը սիրոյ ու ցաւի անհուն վշտով ողբաց իր քաջերու նահատակութիւնը, բայց անոնց ճակատը սրբութեան ու դիւցազնութեան լուսապսակով պճնեց, խորապէս ըմբռնելով թէ՛ որքան նշանակալից էր այդ մարտը. գաղափարի մեծագոյն յաղթանակ մը, որ ոգեւորեց և ապրեցուց հայ ցեղը իր գերագոյն ճգնաժամներուն մէջ, որ ներշնչեց գրական փառքեր վանքերու և տաճարներու գմբէթներուն տակ, ստեղծեց ու արձանագրեց մեր ցեղի դարաւոր պատմական յուշարձանները. անոնց ուխտի դաշինքը իր հիմերուն վրայ կերտեց կրկին ու աւելի մեծ արքայական թագեր և հարստութիւններ, ազատ ու անկախ Հայաստաններ՝ խաչադրօշ Անիներով, որոնց աւերակներն ու լուրջութիւնն անգամ աւելի բարձրագոյն են քան Տիրգրանեան շանդալից յաղթանակներու արձագանգները:

Վարդանանց արիւնն և ոգին դեռ կը շարունակէ գոչել և իր արգասաւորութեամբ վերածնիլ Հայ ցեղին նորանոր սերունդներ՝ յամօթ ամէն յաչաղիտ և արիւնախանձ մոլեգնութեան որ մահացնել կը ձգտի մեր ցեղը:

Սովորութիւն մը յարգելու կամ ձեւական պարտականութիւն մը կատարելու պաշտօնէն շատ վեր է մեր դիտումն և զգացումը, և զիտենք որ նոյնն է ամէն ազնիւ և ազգասէր հայու համար ալ Վարդանանց յիշատակի վերլիշումը, այնքան սփոփիչ, այնքան կենսունակ ու խանդավառող, մանաւանդ տիրող ազգային ու միջազգային տիրուր և մռայլ մթնոլորտին և պայմաններուն մէջ:

Վարդանանցի սաստուածացումի լուսափայլ խորհուրդին ըով կը նշմարենք, կարծես ահամայ կամ բնազդօրէն, սեւ ու արտասուելի սոււերը Վասակեաններու՝ իրենց եղեռնին և եղբրական վախճանին մէջ:

Զարհուրելի է, և սակայն այդ է ճակատագիրը անոնց որ չարութիւնն և յիմարութիւնը կ'ունենան ուրանալու իրենց Հայրերու և Հայրենիքի խնամակալ ու բարերար Աստուածը, և նոյն ինքն Հայրենիքը՝ իրենց հայրերու արիւնով գնուած ու պահպանուած:

Այդ եղած էր և ճակատագիրը սեւ՝ Տիրաններու, Մեհրուժաններու և Վահաններու, որոնք հայրենի սրբութիւններն իրենց կրքին ու փառասիրութեան պատուանդան փորձած էին ընել:

Այդպիսիներ, աւաղ, բացակայ կը գտնուին Արտաշատի ազգային մեծ Ուխտէն. անոնց ահանջին չի հնչեր դիւցազնական կոչը անմահ Վարդանի և ոչ հրայրեաց ճառը աստուածախօս Ղեւոնդի. անոնք, ուրացեալները, կը ծիծաղին մեր նահատակներուն վրայ, իրենց համար յիմարութիւն է կրօնքի սեղանը ուր զոհուած են քաջերը, ուր դեռ կը մտնեն անոնց արիւնը՝ դեռ գուրթ և փրկութիւն հայցելով Հայաստանի:



Այդպիսիներ, ուրացած իրենց հայրերու Աստուածն ու իրենց խիղճը, ու զանոնք Այրաբաթի պորփիւր ժայռերու կողերէն ալ աւելի քարացուցած իրենց հոգւոյն մէջ՝ կ'երթան Վասակի զառանցանքով՝ ի խնդիր իշխանութեան և թագի, մինչդեռ իրենց խօլ վազքին մէջ յանկարծ, անապատներու սարսուռին և խռովքին մէջ կ'որոտայ Ղեւոնդի ոգին. «Ո՞ր կ'երթաս, Սիւնեաց Տէր»: Ո՞ւր, ո՞ւր կը դիմես — կ'ուզէր ըսել Սուրբը — չէ՞ս գիտեր որ Երկինքը՝ զոր ուրացեր ես՝ քեզի համար այլեւս լոյս չի տար, և երկիրը, հայրենիքդ՝ զոր ուրացար և որուն դաւեցիր՝ ոտքերուդ տակ կ'այրի դժոխքի պէս... «Երէ դու գրուիս ողջ Հայաստան դառնաս, քոյ Աստուած ինձի հետ խօսած չըլլայ»:

Քայց խօսեր էր Աստուած, և անոր արդար վրէժի շանթերը տեղացին ուրացեալին վրայ, ինչպէս կ'ըսէ Ղազար:

Վարդանի սիրով ու կարօտով անձկայրեաց Եղիշէն ալ նուազ սեւ ու մռայլ գոյներով չէ՛ որ կը պատկերացնէ ուրացեալին յիշատակը: Վասակի կործանման դժոխքներ տեսարանի վախճանին, ամբողջ հայ ցեղին ի լուր, մանաւանդ այն սերունդին որ հայրենիքի դրօշը ձեռքին՝ հայրենի մարտերը պիտի մղէ Վարդանի ետեւէն և Վարդանի նման՝ Եղիշէ կը քանդակէ որպէս յաւերժական յիշատակաց կոթող — ad perpetuam rei memoriam — «Այս յիշատակարանը գրուեցաւ անոր համար, ի կշտամբումն անոր մեղքին, որպէս զի ո՛վ որ զայս լսէ, նզովք արձակէ անոր ետեւէն և չցանկայ անոր գործերուն»:

Ահա պատգամ մը մեր սերունդին, դարերու խորէն արձագանգող: Նուիրուիլ մեր Հայրենիքի դատին՝ մեր Հայրերու գծած ուղիով. քանի որ ուրացութիւնն անոնց կեանքին ու գործին, անոնց հոգւոյն ու կտակին՝ պիտի նշանակէ խզել ամէն կապ հնութեան հետ, և ուզել ըլլալ լուսատու ջահ՝ հեռացած լոյսի և ջերմութեան վառարանէն, ըլլալ դաւաբարգեղ ու կենսալից շառաւիղ՝ առանց աւելը ծծելու դարաւոր կաղնիին արմատներէն, ուզել ըլլալ առու և գետ հայրենի դաշտերն ոտոգելու՝ խըզուած ու հեռացած իր կենսատու ալէն:

Մեր վերածնունդի շրջանին սքեմաւոր ու աշխարհիկ՝ Եղիշէի ոգով հնչեցին զարթօնքի փողը դէպ ի ազատութիւն, ու մեր սերունդին պատուէր տուին.

«Ոսկի գրքոյկն Եղիշէի — Քաջ առաջնորդ քեզ ընտրիր»:

Եւ հակառակ Վասակեան ուրացեալներու մտայնութեան՝ հոն, Եղիշէի մէջ ցոյց տուին ամբողջ մեր տեսլականն ու մեր ուղին.

«Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան — Ազատ կամքով ու խղճով, Այնտեղ Վարդան, անմահ Վարդան — Իւր խնկելի քաջերով»:

Ու այս նոյնքան խնկելի տողերու հեղինակը սքեմաւորէ մ'աւելի հաւատացեալ, իր օրհասի գերագոյն պահուն, իր ազնիւ ընկեր — հայուն կ'ուղղէ իր կտակը նուիրական, կտակ մը որ սիրտ կ'այրէ, այնքան լի է հաւատքով և յուսով, աղօթք մը մեր պաշտելի Հայրենիքին համար.

«Հայրենիք սեղան սրբութեան — Ես Աստուծոյ առաջել, Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ — Որ ծագէ քեզ նոր արեւ»:

(ՇԱՀԱՅԻՉ)

Այդ էր և մեր կտակը ամէն ազնիւ հայու համար, Վարդանանց տարեւոր տօնախմբութեան սրբարանէն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ